

տնասան հրեշտակները՝ իջնելիս երկնքից, կարծես թե կրակի մեջ էին, և նրանք իջան վար և օղակեցին այն փոքրիկների շուրջը, և նրանք շուրջանակի, օղակված էին կրակով, և հրեշտակները սպասավորում էին նրանց» (3 Նեփի 17.23-24):

Կարո՞ղ են մեր երեխաները նման օրհնություններ զգալ այսօր: Երեց Մ. Ռասել Բալլարդն ասել է. «Անշուշտ, նրանց, ում վստահվել են այս թանկարժեք երեխաները, տրվել է սուրբ և ազնվագույն հանձնարարություն, քանզի մենք ենք այն մարդիկ, ում Աստված նշանակել է այսօր, որ շրջապատեն երեխաներին սիրով և հավատքի կրակով և հասկացողությամբ, թե ով ենք մենք» (“Behold Your Little Ones,”

Tambuli, Oct. 1994, 40):

Եղբայրներ և քույրեր, մենք հրեշտակներ ենք, որոնց Երկնային Հայրը ուղարկել է այսօր օրհնելու համար երեխաներին, և մենք կարող ենք օգնել նրանց մի օր տնանել Փրկչի երեսը, եթե ուսուցանենք ավետարանի սկզբունքները և լցնենք մեր տները դրանցով ապրելու ուրախությամբ: Միասին մենք կարող ենք ճանաչել Նրան: Մենք կարող ենք զգալ Նրա սերը և Նրա օրհնությունները: Եվ Նրա միջոցով մենք կարող ենք վերադառնալ Հոր ներկայություն: Մենք անում ենք սա, որովհետև ուզում ենք լինել հնազանդ, հավատարիմ և պարտաճանաչ Նրա ուսմունքներին հետևելիս:

«Ճշմարիտ, այսպես է ասում Տեբը. Կլինի այնպես, որ ամեն հոգի, որ թողնում է իր մեղքերը և գալիս է ինձ մոտ, և կանչում է իմ անունը, և հնազանդվում է իմ ձայնին, և պահում է իմ պատվիրանները, պիտի տնանի իմ երեսը և իմանա, որ ես եմ» (ՎեՆ 93.1):

Եղբայրներ և քույրեր, ես գիտեմ, որ Աստված ապրում է, Հիսուս Քրիստոսը Նրա Որդին է, մեր Փրկիչը և Քավիչը: Նա մեզ հրավիրել է գալ դեպի Նա և պատվիրել է բերել մեր երեխաներին, որպեսզի մենք միասին կարողանանք տնանել Նրա երեսը և հավերժ ապրել Նրա հետ և մեր Հոր հետ երկնքում: Իմ աղոթքն է, որ մենք բոլորս կարողանանք աշխատել և ստանալ այս մեծ օրհնությունը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



**Երեց Բվենթին Բուք**  
Տասներկու Առաքյալների Բվորումից

# Մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսին

*Մենք ուրախանում ենք այն բոլոր բաներով, ինչ Փրկիչն արել է մեզ համար: Նա յուրաքանչյուրիս համար հասանելի է դարձրել փրկությունը և վեհացունը:*

Մենք պատասխանատվություն է Չատիկի կիրակի խոսել աշխարհով սիռված Վերջին Օրերի Սրբերի հետ, որոնք սիրում են մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսին: Այսօր մենք տոնում ենք մահվան հանդեպ Նրա հաղթանակը: Մենք փայփայում ենք մեր իմացությունը և սրտանց երախտագիտություն ենք զգում մեր օգտին կատարած Փրկչի պատրաստակամ քավիչ գոհաբերության համար: Իր Հոր կամքին Նրա լուռ համաձայնությունը գերազույց հաղթանակ բերեց մահվան հանդեպ և ամենազերազանց իրադարձությունը դարձավ մարդկության պատմության մեջ: Ես երախտապարտ եմ, որ հնարավորություն ունեմ խոսելու

Փրկչին հետևելու մասին: Փրկչի մահկանացու ծառայության վերջին երկու օրերը, Խաչելությանից առաջ, խորապես կարևոր և ինչ-որ առումով հասկացողությունից վեր էին: Մեր հավերժական ճակատագրին վերաբերող չափազանց շատ բաներ տեղի ունեցան հինգաբային և ապա ուրբաթ՝ Քրիստոսի խաչելության օրը: Հինգաբային երկույան եղավ Վերջին ընթրիքը՝ Փեսալի ընթրիքը, «որը գերությունից ազատվելու Իսրայելի հիշատակն էր...»<sup>1</sup>: Մեծ կարևորության արարողություններ հաստատվեցին և վարդապետություններ ուսուցանվեցին Վերջին ընթրիքի ժամանակ: Ես կնշեմ միայն երեքը: Նախ՝ Փրկիչը ներկայացրեց հաղորդության արարողությունը: Նա վերցրեց հացը, կտրեց այն, օրհնեց այն և փոխանցեց Իր աշակերտներին՝ ասելով. «Այս է իմ մարմինը, որ շատերի համար է տրուած. այս արե՛ք իմ յիշատակի համար»<sup>2</sup>: Այս ձևով նա հաստատեց հաղորդությունը: Երկրորդ՝ Նա չափազանց շատ շնչեց սեր ուսուցանող վարդապետությունը՝ որպես վեհացմանը նախորդող սկզբունք: Նա ուսուցանեց. «Մրանով բոլորը կիմանան, որ դուք իմ աշակերտներն եք, եթե դուք միմեանց





են միմյանցից և մեկմեկու վրա զայրացած են: Չնայած որ մենք հասկանում ենք այդ զգացումները, մենք պետք է քաղաքավարի լինենք մեր խոսելաձևում և հարգալից մեր փոխհարաբերություններում: Դա հատկապես ճշմարիտ է, երբ մեր կարծիքը տարբերվում է: Փրկիչը մեզ ուսուցանեց սիրել նույնիսկ մեր թշնամուն<sup>13</sup>: Մեր անդամների մեծամասնությունը հետևում է այս խորհրդին: Այնուամենայնիվ, կան ոմանք, ովքեր զգում են, որ իրենց զայրույթը կամ խորը թաքցրած տարակարծությունը արտահայտելն ավելի կարևոր է, քան այնպես վարվելը, ինչպես Հիսուս Քրիստոսն է ապրել ու ուսուցանել: Ես հրավիրում եմ մեզանից յուրաքանչյուրին, անհատապես, գիտակցել, որ մեր տարածայնության արձագանքը իրական չափանիշ է, թե ով ենք մենք և արդյոք մենք իսկապես հետևում ենք Փրկչին: Անհամաձայն լինելը պատշաճ է, սակայն անհաշտ լինելը պատշաճ չէ: Բռնությունն ու վայրագությունը մեր տարածայնություններ լուծումը չեն: Երբ մենք սեր և

հարգանք ենք ցուցաբերում անգամ հակասությունների ժամանակ, մենք ավելի շատ ենք նմանվում Քրիստոսին:

Առաքյալներին տրված Սուրբ Հոգու խոստումը Փրկչի կողմից մեծագույն կարևորություն ունի Սուրբ Հոգու՝ Աստվածազլխի երրորդ անդամի նախասահմանված բարձր դերը հաստատելիս: Սուրբ Հոգին ոգեղեն անձնավորություն է՝ Մխիթարիչ, որը վկայում է Հոր և Որդու մասին, բացահայտում է բոլոր բաների ճշմարտությունը և սրբագործում է նրանց, ովքեր ապաշխարել են և մկրտվել: Նրան անվանում են Խոստումի Սուրբ Հոգի, և որպես այդպիսին՝ Նա հաստատում է յուրաքանչյուրիս արդար գործերը, արարողությունները և ուխտերը Աստծո համար<sup>14</sup>: Նրանք, ովքեր կնքվում են Խոստումի Սուրբ Հոգով, ստանում են այն ամենն, ինչ ունի Հայրը<sup>15</sup>:

Մենք ապրում ենք աղմկոտ, հակառակություններով լի աշխարհում, որտեղ յուրաքանչյուր ապրած ժամ, ըստ էության, հնարավոր է, մեր

տեսողությունը կամ լսողությունը կլանի տեղեկատվության կամ երաժշտության հաճախ անհեթեթ նյութերով: Եթե ցանկանում ենք ունենալ Սուրբ Հոգու ոգեղենումը, մենք պետք է ժամանակ գտնենք դադար տալու, խորհելու, աղոթելու և ապրելու այնպես, որ արժանի լինենք ստանալ և գործել ըստ Նրա հուշումների: Մենք կյուսասփենք մեծ սխալներից, եթե լսենք Նրա նախազգուշացումներին: Որպես անդամներ՝ մեր արտոնությունն է լույս և գիտելիք ստանալ Նրանից, նույնիսկ մինչև կատարյալ օրը<sup>16</sup>:

Գնթսնմանիում և խաչի վրա Փրկչի անցած քաղիջ փորձությունները մեծ օրինակ են մեզ համար: Նա տարավ մտավոր, ֆիզիկական և հոգևոր չարչարանքներ, որոնք մեր հասկացողությունից վեր են: Դարտեզում Նա աղոթեց Իր Հորը, ասելով. «Հա՛յր իմ, եթե՛ կարելի է, այս բաժակը թող ինձնից հեռու անցնի, բայց ոչ՝ ինչպես ես եմ կամենում, այլ՝ ինչպես դու»:<sup>17</sup> Որպես Նրա աշակերտներ՝ կլինեն ժամանակներ, երբ մենք կփորձվենք և կհալածվենք և կծաղրվենք անարդար ձևով և կհանդիպենք իրենց մեծությամբ մեզ անտանելի թվացող ֆիզիկական և հոգևոր փոթորիկների և դառն բաժակների, որոնք կաղոթենք, որ մեզանից անցնեն: Ոչ որ ազատված չէ կյանքի փոթորիկներից:

Մենք պատրաստվում ենք Փրկչի Երկրորդ Գալստին: Սուրբ գրությունները հստակ ասում են, որ ոչ ոք չգիտի, թե երբ է դա լինելու: Սուրբ գրությունները մեզ հուշում են, որ վերջին օրերի դառն բաժակների թվում կլինեն «... նրկրաշարժեր տարբեր տեղերում»<sup>18</sup> և «... իրենց սահմաններից դուրս եկող ծովի ալիքներ»<sup>19</sup>:

Վերջերս ավերիչ երկրաշարժեր և ցունամիներ եղան տարբեր վայրերում, այդ թվում Չիլիում, Հայիթիում և Խաղաղ օվկիանոսյան կղզիներում: Մի քանի շաբաթ առաջ Նախագահող Եպիսկոպոս Հ. Դեյվիդ Բրթնը, Երեց Թեղ Ռ. Քալիստերը և ես կարողացանք հանդիպել Սրբերի հետ, որոնք անցյալ սնայտնմբերին Սամոայի արևելքում եղած ցունամիի պատճառով կորցրել էին ընտանիքի անդամների:



չավաքատունը լցված էր և ժողովը շատ զգացմունքային անցավ: Մենք կարողացանք հավաստիացնել այդ ընտրյալ անդամներին, որ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ նրանք հնարավորություն կունենան վերստին միանալ իրենց կորցրած հարազատների հետ:

Ցցի նախագահը՝ Սոննի Փարսլը, իր մեքենան էր վարում, երբ նկատեց ծովից եկող մի վիթխարի ալիք: Նա ազդանշան տվեց և կանգնեցրեց դայրոց գնացող երեխաներին և զգուշացրեց, որ որքան հնարավոր է արագ բարձրանան բարձր տեղեր՝ ապահովության համար: Երեխաները հետևեցին նրա հրահանգներին: Նա խելահեղ վարեց մեքենան, հասավ և մեքենան նստացրեց իր չորս տարեկան դստերը, և ապա փորձեց հասնել իր մայրիկին: Նախքան իր մայրիկին հասնելը ջրի մի պատ վերցրեց նրա մեքենան և սրբեց տարավ մոտ 100 մետր և դրեց մի ծառի վրա: Նա մագլցեց վեր, դնելով երեխային ապահով տեղում՝ մեքենայի վրա, ապա լողաց, որ փրկի իր մայրիկին, որը փաթաթվել էր իրենց տան մոտի մեկ այլ ծառի ճյուղից: Մեծ ջանքերով նա լողաց իր մոր հետ դեպի մեքենան, որն ավելի ապահով վայր էր: Ոչ բոլորն էին այդքան հաջողակ: Շատերը չէին հասցրել բարձր և անվտանգ տեղեր բարձրանալ: Շատերն էին կորցրել կյանքը, հատկապես, երեխաները և ծերերը:

Մենք հայտնեցինք Սամոայի ընտանիքներին, որ ողջ աշխարհով անդամները սեր և հոգատարություն էին ցուցաբերում և աղոթում էին նրանց համար և ծովի նվիրատվություններ էին անում և մարդասիրական օգնություն ցուցաբերում անդամների և նրանց հարևանների համար: Նույնը ճշմարիտ է նաև Չիլիի և Հայիթիի անդամների և նրանց հարևանների դեպքում: Մենք դա անում ենք, որովհետև հետևում ենք Հիսուս Քրիստոսին:

Սամոայի ընտանիքների հետ հանդիպումն առավել հստակ դարձրեց ավելի բարձր հոգևոր հարթության բարձրանալու՝ ավելի արդար ապրելու և փրկող արարողություններին կառչած մնալու կարևորությունը: Փրկչի օրինակը և կյանքը մեզ ուսուցանում են հոգևոր առումով



խուսափել ցածր ճանապարհներից, որտեղ գերակայում են այս աշխարհի բաները: Հանդիպման վերջում, անդամների հետ ձեռք սեղմելիս, քույրերից մեկն ասաց, որ իրենց ընտանիքը տաճարում չի եղել և նրանք դուստր են կորցրել: Արցունքն աչքերին նա շարունակեց, որ այժմ նրանց նպատակն է պատրաստվել տաճարային սուրբ արարողություններին, որ կարողանան միասին լինել հավերժության մեջ:

Երբ մտածում եմ այդ քրոջ խոսքերի և աշխարհի ներկա վիճակի մասին, ես անհրաժեշտություն եմ զգում յուրաքանչյուրիս զգուշացնելու, որ բարձրանաք դեպի ավելի բարձր հարթություն, որը տաճարի ապաստարանը և հավերժական պաշտպանությունն է:

1836թ. ապրիլի 3-ի Չատիկի կիրակի օրը, Կիրթլենդի տաճարի նվիրագործումից մեկ շաբաթ անց, Տասներկուսը սպասավորում էին և Տիրոջ ընթրիքի հաղորդությունն էին մատուցում անդամներին: Ժողովից հետո՝ հանդիսավոր և լուռ աղոթքից հետո, Փրկիչն իր վեհաժամբ հայտնվեց Սարգարեն Չոզեն Սմիթին և Օլիվեր Քատլերիին և Մովսեսի, Եդիասի և Եդիայի միջոցով ներկայացրեց քահանայության լրացուցիչ բանալիների վերականգնումը, այդ թվում նաև կնքման գործությունը, որը միավորում է ընտանիքները հավերժության համար<sup>20</sup>:

Այսօր՝ այս Չատիկի առավոտյան, մենք ուրախանում ենք այն բոլոր բաներով, ինչ Փրկիչն արել է մեզ համար: Նա յուրաքանչյուրիս համար հասանելի է դարձրել փրկությունը և վեհացումը: Սակայն

մենք, Սամոայի երեխաների նման, պետք է որքան հնարավոր է արագ վազենք դեպի բարձր հարթությունը, որոնք Նա տվել է անվտանգության և խաղաղության համար:

Այս խորհուրդը կատարելու ձևերից մեկը մեր ապրող մարգարեի՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնտանի խոսքերին հետևելն է: Նա Փրկչի հետևողը լինելու գերազանց օրինակ է:

Այս փառահեռ Չատիկի առավոտյան իմ սրտում արձագանքում է Վերականգնման հավատարիմ ծառաներից մեկի՝ Էլայզա Ռ. Սնոուի գրչի խոսքերը:

*Ի՛նչ մեծ է և ի՛նչ կառկասուն Շրագիլը քալման, Ուր սևը, գութ և արդարություն Դաշն են ու սևըսուսն:*<sup>21</sup>

Ես բերում եմ իմ առաքելական վկայությունը, որ Հիսուս Քրիստոսն ապրում է և աշխարհի Փրկիչն ու Քավիչն է: Նա ճանապարհ է հարթել դեպի ճշմարիտ երջանկություն: Այս մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

#### ՀՂՈՒՄՆԵՐ

1. James E. Talmage, *Jesus the Christ*, 3rd ed. (1916), 594.
2. Դուկաս 22:19:
3. Տես Հովհաննես 13:34–35:
4. James E. Talmage, *Jesus the Christ*, 603; see also John 14:16–17.
5. James E. Talmage, *Jesus the Christ*, 613.
6. 2 Նեվիի 9:6–24:
7. *Եկեղեցու Միասագանների ուսմունքները*. Չոզեն Սմիթ, 49, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 20:22–25:
8. Frederic W. Farrar, *The Life of Lives—Further Studies in the Life of Christ* (1900), 209.
9. Stiu Gordon B. Hinckley, “This Glorious Easter Morn,” *Ensign*, May 1996, 65–67; “The Symbol of Our Faith,” *Liabona*, Apr. 2005, 2–6:
10. Տես 3 Նեվիի 18:1–11:
11. Տես Մոսիա 3:19:
12. Տես Մոսիա 18:8–10 և Վարդապետություն և Ուխտեր 20:37, Վարդապետություն և Ուխտեր 20:77–79:
13. Տես Մատթոս 5:44:
14. Վարդապետություն և Ուխտեր 132:7:
15. Վարդապետություն և Ուխտեր 76:51–60; տես Եփեսացիս 1:13–14, Հռովմայեցիս 8:16–17:
16. Վարդապետություն և Ուխտեր 50:24:
17. Մատթոս 26:39:
18. Մատթոս 24:7, Չոզեն Սմիթի – Մատթոս 1:29:
19. Վարդապետություն և Ուխտեր 88:90:
20. Տես Վարդապետություն և Ուխտեր 110: 21. «How Great the Wisdom and the Love». *Hymns*, no. 195: